ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ԳԼՈՒԽ 4

Ը

Հոդված 16. Սոցիալական նպաստ ստանալու իրավունքը և տրամադրման հիմքը

1. Սոցիալական նպաստ ստանալու իրավունք ունի ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված՝ մինչև 18 տարեկան անդամ չունեցող այն ընտանիքը, որի անապահովության միավորը բարձր է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված սոցիալական նպաստի իրավունք տվող սահմանային միավորից:

1.1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել սոցիալական նպաստ ստանալու իրավունք տվող այլ պայմաններ:

2. Սոցիալական նպաստ ստանալու իրավունքը ծագում է դիմողի դիմելու օրվա դրությամբ, և սոցիալական նպաստը վճարվում է դիմելու օրվա ամսվան հաջորդող ամսից:

(16-րդ հոդվածը փոփ., լրաց. 06.12.17 ՀՕ-230-Ն)

Հոդված 17. Սոցիալական նպաստ ստանալու իրավունքի դադարեցման հիմքերը

1. Սոցիալական նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է՝

1) ընտանիքի անապահովության միավորը սոցիալական նպաստի իրավունք տվող՝ ընտանիքի անապահովության սահմանային միավորից իջնելու դեպքում.

1.1) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած սոցիալական նպաստ ստանալու իրավունք տվող այլ պայմանների վերացման դեպքում.

2) դիմողի կողմից սույն օրենքի 11-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված ժամկետում տարածքային կենտրոն անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում.

3) սոցիալական նպաստն անընդմեջ 3 ամիս անհարգելի պատճառով չստանալու դեպքում.

4) ընտանիքի կամ ընտանիքի անդամներից որևէ մեկի՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում կրկնակի հաշվառման դեպքում:

2. Սոցիալական նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է սույն հոդվածի 1-ին մասում նշված հիմքերի հայտնաբերման օրվան հաջորդող ամսվա 1-ից:

(17-րդ հոդվածը փոփ. 01.12.14 ՀՕ-207-Ն, լրաց. 06.12.17 ՀՕ-230-Ն)

ԳԼՈՒԽ 4.1

Հոդված 17.1. Խնամակալության նպաստ ստանալու իրավունքը և տրամադրման հիմքը

1. Խնամակալության նպաստ ստանալու իրավունք ունեն տասնչորս տարին չլրացած անչափահասների նկատմամբ կամ 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչվածների նկատմամբ կամ հոգեկան խանգարման հետեւանքով դատարանով անգործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ խնամակալ ճանաչվածները, որոնք հաշվառված են խնամակալության նպաստի համակարգում:
2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել Խնամակալության նպաստ ստանալու իրավունք տվող այլ պայմաններ:
3. Խնամակալության նպաստ ստանալու իրավունքը ծագում է դիմողի դիմելու օրվա դրությամբ, և խնամակալության նպաստը վճարվում է դիմելու օրվա ամսվան հաջորդող ամսից:

Հոդված 17.2 խնամակալության նպաստ ստանալու իրավունքի դադարեցման հիմքերը

1. խնամակալության նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է՝

1) խնամակալության նպաստի համակարգում հաշվառումից դուրս գալու դեպքում.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած խնամակալության նպաստ ստանալու իրավունք տվող այլ պայմանների վերացման դեպքում.

2) դիմողի կողմից սույն օրենքով սահմանված ժամկետում տարածքային կենտրոն անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում.

3) խնամակալության նպաստն անընդմեջ 3 ամիս անհարգելի պատճառով չստանալու դեպքում.

4) խնամակալության նպաստ ստացողի խնամակալության համակարգում կրկնակի հաշվառման դեպքում:

2. Խնամակալության նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է սույն հոդվածի 1-ին մասում նշված հիմքերի հայտնաբերման օրվան հաջորդող ամսվա 1-ից:>>: